

չապայկն կենդանական ցեղի պատմութեան հետ (*):

Ահա դիցարանութիւնը ու Սիմպօլը. երկու ցեղեր իրենց խորհրդանշերով ինքզինքնին կը ներկայացնեն, մէկը Վիչապ-պատառող կենդանի, զսղ բնաւորութիւնով. Միւսը՝ հայր մը կամ ընտանեկան կազմաւորութիւնը. օրէնսդրութիւն կամ մտաւորականութիւն. քաջութիւն ու ռազմավարութիւն, իր վեհանձնութեան մէջ ինքզինքը Աստուածացուցած, բայց դարձեալ Վիչապկն մօտ:

Այս վիշապկան առասպելաբանութենէն յետոյ ուր անորոշ է թէ մարդիկն են աստուածացուած՝ թէ երեւակայած աստուածներ մարդացած. բայց յատակ ու ջինջ կ'երեւայ ժողովուրդ մը, թէ ինչպէս կը ցոլացնէ իր հոգեկան դրութիւնը, ու դարեւրու յաջորդականութիւնները կը պարզեն թէ ինչ մասեր զարգացական ընթացք ստացած են, և ինչեր ջնջուած ու անհետացած:

Կայ հռչակաւոր օրէնսդիր մը Զրազաշտ, որը չրճաններու ցեղերի կամ ազգերի ամեն մէկը իր կարգին կ'իւրացնէ, զայն իրենք համարելով:

Ժամանակիս լուսաւորեալ Քիւրդերը հաստատելու համար

(*) «Հայկ. — Աստուած. Ազացոյցն է Յօր ԼԲ. 31. Եսայի ԺԴ. 10 ուր Յոյն բնագրի մէջ Օրէոն, մեր մէջ կը գրուի Հայկ. համաստեղութիւն մը բաղկացած 63 աստղերէ, Յուլի մօտ զետեղուած վահանաշէն սկսիչ ձևով: Շատ հեղինակներ որոնց մէջ և Միսնիս Շիրակունին Հայիկ ծանուցուած որդիէն զատ կու տայ վեց մանչու և վեց աղջկան անուններ՝ որ Հայկական նախնի ամիսներու անուններն են: Ուրիշները 12 որդի կու տան անոր և քսանչորս աղջիկ, տասներկու ամսուան և քսանչորս ժամերուն՝ իբր նշան աստուածութեան:

Հայկ, հայրն է Արամազդայ Արամ-Աստուած, պատերազմիկ և քաջ՝ նման յունաց Արամազդի: Արամազդ յայտնի է իր պարսիկ կամ Զանդիկ (Որմիդդ) անունով:

Արա. — Օրէնսդիր կռապաշտութեան և Աստուած իմաստութեան.